Ազգ
Azg
armenian daily
24 ՕԳՈՍՏՈՍ 2002 ՇԱԲԱԹ 150 (2595)

# Ռուսաստանը համաձայն չէ Հուսեյնի վարչակարգը տապալելու ԱՄՆ-ի դիրքորոշմանը

ՄՈՍԿՎԱ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի փոխարտգործնախարար Վյաչեսլավ Տրուբնիկովը «ԻՏԱՌ ՏԱՍՍ»-ին տված հարցազրույցում ասել է, թե Ռուսաստանը համաձայն չէ Իրաքում Սադդամ Հուսեյնի վարչակարգը տապալելու ԱՄՆ-ի դիրքորոշմանը: Նրա կարծիքով, «Ալ Ղաիդայի» հետ իրաքյան իշխանությունների կապը ապացուցող որեւէ փաստ, ինչի մասին հայտարարում են ԱՄՆ-ի որոշ պաշտոնական անձինք, գոյություն չունի: Տրուբնիկովը ժխտել է նաեւ ԱՄՆ-ի քննադատությունը ռուս-իրանական միջուկային ենթադրյալ համագործակցության վերաբերյալ: Նա նշել է, որ Մոսկվայի գործողությունները դուրս չեն գալիս միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի շրջանակներից:

«Ազատություն» ռադիոկայանը հիշեցնում է, որ օրերս Մոսկվայում գտնվող ԱՄՆ-ի մի խումբ կոնգրեսականներ մտահոգություն են հայտնել Իրանի եւ Իրաքի հետ Ռուսաստանի կապերի ընդլայնման առնչությամբ:

ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐ

# Իսրայելի կառավարությունը տեղաշարժում է «անվտանգության պարիսպը» Պարոն Տերի հատվածում

Իսրայելի պետության կառավարությունը եւ պաշտպանության ուժերը որոշել են վերաստուգության ենթարկել Երուսաղեմի հայոց պատրիարքությանը պատկանող Պարոն Տեր կալվածքի միջով «անվտանգության պարիսպ» անցկացնելու իրենց նախկին որոշումը: «Անվտանգության պարիսպը» այսուհետեւ անցնելու է ոչ թե հայապատկան կալվածքի միջով, այլ կառուցվելու է դրա եւ Բեթղեհեմի պաղեստինյան հողերի եզրագծով՝ այդպիսով նվազ վնաս հասցնելով կալվածքին եւ Հայոց պատրիարքության կողմից դրա օգտագործմանը: Այս մասին մեզ տեղեկացնում է Հայկական համաշխարհային դաշինք (Armenian World Alliance) կազմակերպության հասարակական հարաբերությունների գրասենյակը Տորոնտոյից (Կանադա)՝ դժբախտաբար առանց նշելու իր տեղեկատվության աղբյուրը:

Կազմակերպությունը հիշեցնում է, որ «անվտանգության պարիսպը» հայապատկան կալվածքի եզրագծով կառուցելու տարբերակն Իսրայելի պաշտպանության նախարարությանն առաջարկվել էր դեռեւս վեճի սկզբից, Երուսաղեմի հայոց պատրիարք Ամենապատիվ Թորգոմ արք. Մանուկյանի կողմից: Սակայն, դժբախտաբար, շարունակ մերժվել էր, եւ պատրիարքությունը ստիպված էր եղել հարցը բարձրացնել Իսրայելի գերագույն ատյանում:

Համենայն դեպս, Հայկական համաշխարհային դաշինքը զգուշավոր լավատեսությամբ է հաղորդում լուրը, եւ նույն զգուշավորությունն ստիպված ենք որդեգրել նաեւ մենք: Նշանակում է, որ համայն հայությունն իր ազգային-եկեղեցական կառույցներով, պետական եւ հասարակական մարմիններով շարունակելու է աչալուրջ հետեւել զարգացումներին եւ թույլ չտալ դարերով հայոց պատկանող ունեցվածքի նկատմամբ որեւէ ոտնձգություն:

ՍՏՈՒԳՎԱԾ

# Նախագահ Քոչարյանը այցելեց Վայոց ձորի ձեռնարկություններ

Երեկ Վայոց ձորի մարզ այցելեց նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Առաջին վայրը, որտեղ կանգ առավ նրա գլխավորած պատվիրակությունը, Գետափի գինու գործարանն էր: Այն «Վեդի Ալկո» ընկերության ձեռնարկություններից մեկն է, որի մասին որոշ մանրամասնություններ հաղորդեց այս ընկերության խորհրդի նախագահ Մանվել Ղազարյանը: Չորս գյուղերում ընկերությունը գնել է հողատարածքներ եւ ստեղծել խաղողի այգիներ՝ Գնիշիկ, Աղավնաձոր, Գլաձոր եւ Գետափ: Գյուղերում մոտ 50 հեկտար տարածքի վրա աճեցնում են Արենի խաղողի տեսակը, որից էլ ստացվում է համանուն գինին: Գետափի գինու գործարանը տարեկան արտադրում է 300 հազար շիշ ինչպես «Արենի», այնպես էլ «Վերնաշեն», «Եղեգիս», «Գետափ» գինիներ, որոնց մի մասը՝ մոտ 20–25 տոկոսը, արտահանվում է Ռուսաստան, Ֆրանսիա, Մ. Նահանգներ, մերձբալթյան երկրներ: Գործարանն աշխատանքով է ապահովում մոտ 300 մարդու, որից 80-ը բուն գործարանում, մնացածը՝ այգիներում:


PHOTOLURE

Ռ. Քոչարյանի այցելության հաջորդ վայրը մարզի փոքր ձեռնարկություններից էր՝ Գետնատուն գինու արտադրամասը, որը ստեղծվել է 3 տարի առաջ: Այս ժամանակահատվածում այստեղ արտադրվող գինիներն արտահանվում են ԱՄՆ եւ Բալթյան երկրներ:

Մինչ Մալիշկա գյուղի ադամանդագործության ձեռնարկություն մեկնելը, նախագահի գլխավորած պատվիրակությունը եղավ գյուղը շրջանցող ճանապարհի հատվածներից մեկում, որտեղ ընթանում են շինարարական աշխատանքներ: Ադամանդագործական ձեռնարկությունում, որը պատկանում է DPA ընկերությանը, Ռ. Քոչարյանը շրջեց արտադրամասերում, ծանոթացավ արտադրական գործընթացին: Այստեղ աշխատում է 70 մարդ, որոնք ստանում են բավական բարձր՝ ամսական 70–80 հազար դրամ աշխատավարձ:

Ռ. Քոչարյանի այցելության վայրերից էր նաեւ Բերդի միավորումը: Այս գյուղատնտեսական ընկերությունը շուրջ 60 հեկտար բարձրադիր հողատարածքների վրա մշակում է խաղողի եւ պտղի այգիներ՝ ծիրան, նուշ, ընկույզ:

Հանրապետության նախագահն այցելեց նաեւ Վայքի զորամասերից մեկը, ծանոթացավ զինվորների եւ սպաների առօրյային:

Օրվա վերջում, արդեն Ջերմուկ քաղաքում, նախագահը մարզի ղեկավարների եւ գյուղապետների մասնակցությամբ անցկացրեց խորհրդակցություն:

Այսօր սպասվում է նախագահի այցը «Ջերմուկ գրուպ» ընկերություն, որից հետո նախատեսվում է այցի արդյունքներն ամփոփող մամուլի ասուլիս:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ռուսական օդուժը ռմբահարել է Պանկիսի, Իվրի եւ Իլթոյի կիրճերը, կան զոհեր

*Սերգեյ Իվանով. «Ռուսաստանը, բնականաբար, այս ամենի հետ կապ չունի»*

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ընդդիմադիր «Ազգային ճակատի» առաջնորդ Նոդար Նաթաձեն երեկ հայտարարել է, թե Վրաստանի իշխանությունները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ, որ Ռուսաստանը ռմբահարի Վրաստանը: «Դեռ մեկ տարի առաջ Աբխազիայում սադրանք հրահրելու նպատակով իշխանություններն օգտագործեցին չեչեն գրոհայիններին: Շեւարդնաձեն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում, որ Պանկիսում պատերազմ սկսվի», ասել է Նաթաձեն:

Եթե վստահենք պաշտոնական Թբիլիսիի համառ պնդումներին, ապա երեկ վաղ առավոտյան սկսվել է վրաց-ռուսական պատերազմ, որը տեւել է 40 րոպե: Մոսկվայի հասցեին սպառնալից հայտարարություններ են արել վրաց հայտնի եւ անհայտ գրեթե բոլոր գործիչները: Սկսենք նախագահ Շեւարդնաձեից, որը բարիդրացիական հարաբերությունների մեջ է չեչեն ահաբեկիչների հետ: «Եթե այսպես շարունակվի, ապա Վրաստանը ստիպված կլինի դիմել բոլոր հնարավոր միջոցներին՝ վերջ տալու նմանօրինակ ռմբահարումներին»:

Տես ▸ էջ 5


PHOTOLURE

# Հայաստանն ու Կուբան բարելավելու են առեւտրային հարաբերությունները



ԵՐԵՎԱՆ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կուբան ցանկանում է բարելավել առեւտրային հարաբերությունները Հայաստանի հետ, ասել է Կուբայի արտաքին առեւտրի նախարար Ռաուլ դե լա Նուեզը՝ օգոստոսի 21-ին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ հանդիպումից հետո: Ինչպես տեղեկացնում է «Կարիբյան մեդիա կորպորեյշըն» գործակալությունը, Կուբայի արտաքին առեւտրի նախարարը նշել է, որ երկու երկրների տնտեսությունների բնութագիրը վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ երկրներն ունեն արտադրանքներ, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում:

Նույն աղբյուրը տեղեկացնում է, որ Կուբայի արտաքին առեւտրի նախարարն ու ՀՀ արտգործնախարարը ստորագրել են համագործակցության համաձայնագիր՝ առողջապահության բնագավառում: Իսկ երեկ Վ. Օսկանյանի գլխավորած պատվիրակությունը Կուբայից մեկնել է Մեքսիկա:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Կայուն զարգացման հնարավորություններ

ՋԵՅՄՍ Դ. ՎՈՒԼՖԵՆՍՈՆ
Համաշխարհային բանկի նախագահ



Անցյալ տարվա գարնանը Մոնթերեյ քաղաքում կայացած ՄԱԿ-ի բարձր մակարդակի հանդիպումը աղքատ երկրներին դրդեց իրենց վրա վերցնել կառավարման համակարգի եւ վարվող քաղաքականության կատարելագործման խնդիրը՝ հարուստ երկրների կողմից ցուցաբերվող օգնության ծավալը մեծացնելու եւ իրենց առեւտրային շուկաները բացելու խոստման դիմաց: Բարձր մակարդակի հանդիպումը կայուն զարգացման խնդրով, որը տեղի կունենա Յոհաննեսբուրգում, մեզ խոսքից գործի անցնելու հնարավորություն է ընձեռում:

Ի՞նչ կարող է ակնկալել աշխարհը Յոհաննեսբուրգի հանդիպումից: Հավանաբար այս հարցի լավագույն պատասխանը գտնելու համար պետք է նայել ապագային եւ պատկերացնել՝ ինչպիսի աշխարհ է մեզ պետք ոչ միայն այսօր, այլ նաեւ մեր զավակների եւ մեր զավակների զավակների համար: Մի՞թե ավելի աղքատ երկիր մոլորակ, որի վրա կլինեն ավելի շատ քաղցած մարդիկ, ավելի փոփոխական կլիմա, նվազ քանակությամբ անտառներ, ավելի աղքատ կենսաբազմազանություն եւ ավելի շատ պրոբլեմներ, որոնք հանգեցնում են սոցիալական պայթյունների: Սա՞ է այն ժառանգությունը, որը մենք կթողնենք: Ըստ ՀԲ պատրաստած Համաշխարհային զարգացման նոր զեկույցի, առաջիկա 50 տարում Երկիր մոլորակի բնակչությունը կավելանա 50 տոկոսով եւ կհասնի 9 միլիարդ մարդու, իսկ համաշխարհային համախառն ներքին արտադրանքը կաճի 4 անգամ եւ կկազմի 140 տրիլիոն դոլար: Արտադրողական եւ սպառողական ներկայիս միտումները հաշվի առնելով՝ սոցիալական եւ էկոլոգիական ստրեսները սպառնում են խափանել զարգացմանն ուղղված գործողությունների պլանները եւ սպառնալիք են կենսամակարդակի համար, եթե մեր քաղաքականությունն ու ինստիտուտները չկատարելագործվեն:

Տես ▸ էջ 4

